ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՊԵՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՎԼԱԴԻՄԻՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Վարդանյան,

Առաջնորդվելով Սահմանադրության 195-րդ հոդվածի 2-4-րդ մասերով, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով,134-րդ և 145-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության 30.09.2022թ.-ի որոշմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածու է առաջադրվել Արմեն Վոլոդյայի Սմբատյանը:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից թեկնածուին իրավասու է ներկայացնել պատգամավոր Տրդատ Սարգսյանը:

Ազգային ժողովի աշխատակարգի 101-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կից ներկայացվում են.

1. թեկնածուի առաջադրման վերաբերյալ խմբակցության 30.09.2022թ.-ի որոշումը,
2. թեկնածուի նույնականացման քարտի պատճենը,
3. թեկնածուի կենսագրությունը,
4. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնում ընտրվելու համար թեկնածուի՝ 30.09.2022թ.-ի գրավոր համաձայնությունը:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

03.10.2022թ.

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջնորդվելով Սահմանադրության 195-րդ հոդվածի 2-4-րդ մասերով, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 134-րդ և 145-րդ հոդվածներով՝ խմբակցությունը որոշեց.

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածու առաջադրել Արմեն Վոլոդյայի Սմբատյանին:

2. «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից թեկնածուին իրավասու է ներկայացնել պատգամավոր Տրդատ Սարգսյանը:

3.Խմբակցության որոշումը, ինչպես նաև Սահմանադրությամբ և օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

30.09.2022թ.

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԵՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՍՄԲԱՏՅԱՆ

Ծնվել է 1977թ. սեպտեմբերի 26-ին Եղեգնաձորում:

Կրթություն

1994թ. ավարտել է Եղեգնաձորի թիվ 1 միջնակարգ դպրոցը:
1994 – 1999թթ.՝ Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտ:
2001-2003թթ.՝ ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտուրա:
2004-2007թթ.՝ ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի իրավաբանական բաժին, իրավագիտության մագիստրոս:
2015-ից՝ ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդ:

Աշխատանքային գործունեություն

1998-1999թթ աշխատել է ՀՀ բանկային համակարգում:

1999-2001թթ. ծառայել է ՀՀ ազգային բանակում:

2002-2007թթ. աշխատել է շինարարական ընկերության փոխտնօրեն:

2004թ.՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գյուղական համայնքների զարգացման միավորում-գյուղական համայնքների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, մշակման և համայնքների անձնագրավորման փորձագետ:

2006-2007թթ. «Ազգային տարի» ՊՈԱԿ-ում զբաղեցրել է աշխատակազմի ղեկավար-գլխավոր մենեջերի պաշտոնը, եղել է Ֆրանսիայում Հայաստանի տարին ազդարարող «Շառլ Ազնավուր և ընկերներ» համերգի գլխավոր մենեջերը:

2007-2010թթ. աշխատել է ՀՀ աշխատանքի պետական տեսչության Երևանի տարածքային կենտրոնի պետի տեղակալ, 2010- 2011թթ՝ ՀՀ աշխատանքի պետական տեսչության պետի տեղակալ:

2010-2011թթ.՝ ՀՀ աշխատանաքի պետական տեսչության աշխատողների արհեստակցական միության նախագահ:

2011թ. հուլիսին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով

նշանակվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, ընտրվել հանձնաժողովի քարտուղար:

2016թ. հոկտեմբերի 6-ին ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ ընտրվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ:

2016թ. հոկտեմբերի 11-ին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ ընտրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար:

Դասավանդում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Ամուսանացած է, ունի երկու որդի:

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Արմեն Վոլոդյայի Սմբատյանս, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 4.1-ին մասի և Ազգային ժողովի աշխատակարգի 101-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ տալիս եմ իմ համաձայնությունը Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամի պաշտոնում ընտրվելու վերաբերյալ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՍՄԲԱՏՅԱՆ

30.09.2022թ.